«Նոր ժամանակի կրթություն»

ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա

ուսուցիչների վերապատրաստման

դասընթաց

Հետազոտության թեման՝

Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդան ընթացքում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Տիգրանուհի Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Մելանթոն Արսլանյանի անվան Թալինի թիվ 1 հիմնական դպրոց

Արագածոտն 2022

Բովանդակություն

Ներածություն 2

Գլուխ 1 Գործնական աշխատանքը որպես ուսումնական գործիք 3
1.1 Սովորողի մոտ մոտիվացիայի ստեղծում 3
1.2 Խոսքի և մտածողության զարգացում գործնական աշխատանքի ընթացքում 3
1.3 Համագործակցությունը գործնական աշխատանքում 4
1.4 Համագործակցային դասի պահանջները 4
Գլուխ 2 ԽՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ..... 6
2.1 Խաղը որպես գործնական աշխատանք..... 6
2.2 Գործնական աշխատանքի տեսակները 6
2.3 Վերարտադրողական գործնական աշխատանք 6
2.4 Մասամբ որոնողական գործնական աշխատանք 7
2.5 Ստեղծագործական գործնական աշխատանք 7
Գլուխ 3 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 8
3.1 Սոցիալական հմտություններ 8
3.2 Նպատակային իրավիճակներ 8
Գլուխ 4 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 9
4.1 Գործնական աշխատանքի գործնական մեթոդ 9
4.2 Գործնական աշխատանքի՝ ինքնուրույն աշխատելու մեթոդ 9
4.3 Գործնական աշխատանքի խմբային մեթոդ 11
4.4 Լաբորատոր գործնական աշխատանք 12
4.5 Անալիզ, իրավիճակային և գործնական խաղեր 12
Գլուխ 5 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ
5.1 Գործնական աշխատանքի պլանի մշակում 13
5.2 Առարկայական գործնական աշխատանքների առարկայական նպատակները 14
Եզրակացություններ 15

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ասա ինձ ու ես կմոռանամ,
Ցույց տուր ինձ, ու ես կհիշեմ.
Թույլ տուր անեմ, ու ես կսովորեմ:

Կոնֆուցիոս

Ամեն երեխա ծնվում է հետազոտող: Անհագ ծարավ տպավորությունների, հետաքրքրասիրության, դիտարկելու և փորձելու ձգտումը ինքնուրույն գտնել նոր տեղեկություններ դիտվում է որպես երեխային բնորոշ գծեր: Հենց այս բնական վիճակն էլ բերում է պայմանի՝ հետազոտական ուսուցում կազմակերպելու:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Ժամանակակից դպրոցի խնդիրն է ուսուցումն ավելի հետաքրքիր դարձնելը՝ ապահովել դպրոցում ստեղծագործական մթնոլորտ, գտնել նոր միջոցներ և հնարներ, որ ավելի հետաքրքրի դարձնի ուսուցումը, ունենա ճանաչողական նշանակություն և խթանի աշակերտների ստեղծագործական, պրպտուն մտքի զարգացմանը:

Գործնական աշխատանքի նպատակը և խնդիրներն են՝

- ներկայացնել հիմական նպատակը
- ինչի համար է գործնական աշխատանքը
- ինչ է նշանակում գործնական աշխատանք
- ինչ առավելություններ ունի գործնական աշխատանքը
- աշխատանքի բովանդակությունը
- աշխատանքի կողմնորոշումը
- աշխատանքի մեթոդները

ԳԼՈՒԽ 1

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացի տեսակ է և բազմաբնույթ խնդիրների կատարում: Եթե գործնական աշխատանքը իրականացվում է սիստեմատիկ, ապա նպաստում է ամրապնդելու գիտելիքները: Շատ հարմար է երկու-երեք դասից հետո լինի գործնական աշխատանք: Այն նպաստում է տրամաբանորեն յուրացնել նյութը և ճիշտ մեկնաբանել այն: Եթե դասանյութը տալիս է ընդհանրական գիտելիքներ, տեղեկություններ, որը բավական դժվար է յուրացնել միայն լսելով, ապա գործնական աշխատանքը հնարավոր է դարձնում հասկանալ դժվար ըմբռնվող տեղեկության բուն նպատակը: Գործնական աշխատանքը սովորողին բերում է գիտակցման, որ պարզապես նյութի անգիր իմացումը շատ քիչ է, անհրաժեշտ է ապացուցել սեփական գիտելիքների մակարդակը գործնական իմացությամբ:

1.1 **Սովորողի մոտ մոտիվացիայի ստեղծում**

Մանկավարժության հիմնական նպատակներից մեկը սովորողի ուսումնական գործունեության ակտիվացումն է: Ակտիվության սկզբունքը ենթադրում է, որ ուսումնական գործունեությունը պետք է պարունակի մոտիվացիայի (հետաքրքրության բարձր մակարդակ), գիտելիքների, կարողությունների յուրացման պահանջմունք, արդյունավետություն և

յուրացում սոցիալական նորմերին: Այս նպատակների հասնելու լավագույն միջոցը գիտելիքի և գործնական աշխատանքի համագործակցությունն է որպես ուսուցման գործիք:

1.2 **Խոսքի և մտածողության զարգացում գործնական աշխատանքի ընթացքում**

Սովորողի մտավոր կարողությունների ձևավորման խնդիրներից է խոսքի և մտածողության զարգացումը: Այն ձևավորվում է շրջապատող իրականությունը ճանաչելու ընթացքում: Այդ նպատակներից ելնելով՝ ուսուցիչը ընտրում է այնպիսի եղանակներ և մեթոդներ, որոնք կնպաստեն այդ գործընթացին: Գործնական աշխատանքի նպատակն է զինել սովորողին կարողություններով և հմտություններով՝ ելնելով կոնկրետ առարկայի հատկանիշներից: Գործնական աշխատանքի սիստեմատիկ կատարումը կարևոր միջոց է ձեռք բերելու այնպիսի մտածելակերպ, ինչպիսին է անալիզը, սինթեզը, համեմատությունը, ընդհանրացումը, կապը իմացության և գործական ուսուցման, զարգացնում ճանաչողությունը և սովորողի ինքնուրույնությունը: Գործնական աշխատանքը օգնում է կոնկրետացնել և ամրապնդել գիտելիքը, պահպանել և օգտագործել հմտությունները և կատարելու հնարքները:

1.3 Համագործակցությունը գործնական աշխատանքում

Համագործակցությունն ինչ-որ տեղ խաղ է, որը տանում է սովորողի անհատականությունը և աշխարհընկալումը լիարժեք ընկալելուն: Համագործակցության միջոցով բացահայտվում է յուրաքանչյուր սովորողի ներուժը, զարգացնում է երեխայի ուշադրությունը մտածողությունը, երևակայությունը, իրար լսելու կարողությունը, միմյանց օգնելու հմտությունը և համբերատարությունը:

1.4 Համագործակցային դասի պահանջները

Այն կազմակերպելուց պետք է հաշվի առնել որոշակի նորմեր, պայմաններ.

- հանձնարարվող նյութը հասկանալի լինի համագործակցող խմբի բոլոր մասնակիցներին
- թեմայի բովանդակությունը համապատասխան լինի մասնակիցների գիտելիքների և կարողությունների մակարդակին
- համագործակցությունը նպաստի հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը
- նպաստի լսելու, միմյանց կարծիքը հարգելու, հաղորդակցվելու և ճշտելու կարծիքները՝ միմյանց հետ համադրելով
- կարողանալ ներկայացնել խմբային աշխատանքը և լրացնել միմյանց մտքերը
- մեկը մյուսի միտքը ընկալելու և շարունակելու հմտության ձևավորմանը

Համագործակցային դասի օրինակ՝
ուսումնասիրել օդային թաղանթը մի քանի ուսումնական առարկաների դասաժամերին:

Ուսումնասիրությունը աշխարհագրության դասաժամին՝

- ինչ է օդային թաղանթը
- ինչ ազդեցություն ունի աշխարհագրական թաղանթի վրա
- ինչ շարժումներ է կատարում (քամիներ)
- օդային զանգվածների դերը աշխարհագրական երևույթների վրա
- եղանակային երևույթներ
- կլիմայաստեղծ գործոն

Ուսումնասիրությունը ֆիզիկայի դասաժամին՝

- օդի խտության ուսումնասիրություն
- օդի ֆիզիկական հատկանիշները
- օդը որպես ջերմամեկուսիչ

- դիմադրողականության ուժ

Ուսումնասիրությունը քիմիայի դասաժամին՝

- օդի բաղադրությունը
- քիմիական տարրերի առկայությունն օդում
- օդի մասնակցությունը քիմիական ռեակցիաներին

Ուսումնասիրությունը կենսաբանության դասաժամին՝

- օդի ազդեցությունը բուսական ու կենդանական աշխարհի վրա
- օդը որպես կենսական միջավայր կենդանի օրգանիզմներ համար

Այս ձևով անցկացված համագործակցային դասը նպաստում է բացահայտել օդային ավազանի բազմաբնույթ նշանակությունը աշխարհագրական թաղանթի համար և բարձրացնել աշակերտների մոտ սեփական գիտակցումը օդային ավազանի մաքուր պահելու էկոլոգիական նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2
ԽՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային գործնական աշխատանքը օգնում է գիտելիքը գործնականում կիրառելու կարողություն ձևավորելուն:

2.1 Խաղը որպես գործնական աշխատանք

Գործնական աշխատանքը ինչ-որ տեղ նման է խաղի, և սովորողը չի գիտակցում, որ դաս է անում, հատկապես երբ աշխատանքը կազմակերպվում է փոքր խմբերով: Այստեղ աշխատանքը՝ ուսուցման պրոցեսը կատարվում է հաճույքով, երեխան հետաքրքրությամբ և համագործակցելով է աշխատում: Ինքը մենակ չէ,

պատասխանատվությունը միայն իրենը չէ, և սովորում է լավ աշխատանք կատարելու ժամանակ ուրախությունը կիսել ընկերների հետ, իսկ սխալ աշխատանքն էլ այնքան սարսափելի չէ, քանի որ դա միայն իրենը չէ:

2.2 Գործնական աշխատանքի տեսակները

Գործնական աշխատանքներ կիրառվում են ուսումնական բոլոր առարկաներից: Այն ստեղծվում է յուրաքանչյուր առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, որն էլ պայմանավորում է աշխատանքի և առաջադրանքների տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքի տեսակը որոշվում է սովորողի գործունեության ձևով: Լինում են՝

- վերարտադրողական
- մասամբ որոնողական
- ստեղծագործական

2.3 Վերարտադրողական գործնական աշխատանք

Վերարտադրողական գործնական աշխատանքը հնարավորություն է տալիս ցուցադրելու և բացահայտելու ինչ է սովորել և ինչ է կարողանում անել աշակերտը, օրինակ՝ օգտվել քարտեզներից, տարբերել քիմիական տարրերը, նյութերը և այլն:

2.4 Մասամբ որոնողական գործնական աշխատանք

Մասամբ որոնողական գործնական աշխատանքը ունի ոչ միայն որոշակի գիտելիքներ ըստ վերարտադրողականության, այլև հնարավորություն է տալիս կատարել լրացումներ, լուծում տալ առաջադրված խնդիրներին, օրինակ՝ սովորողը կարողանում է օգտվել կողմնացույցից և գտնել հորիզոնի կողմերը, աշխատել քարտեզով, ստեղծել նյութի սխեմատիկ պատկեր, նկարագրել երևույթներ և այլն:

2.5 Ստեղծագործական գործնական աշխատանք

Ստեղծագործական գործնական աշխատանքի ժամանակ սովորողը կարողանա գտնել առաջադրված խնդրի լուծումը ինքնուրույն կամ դա կատարի խմբի անդամների հետ՝ ցուցադրելով կարողությունների զարգացման որոշակի մակարդակ: Այս աշխատանքում նա պետք է օգտագործի ոչ միայն տվյալ առարկայից գիտելիքներ, այլև այլ առարկաներից ունեցած գիտելիքներն ու կարողությունները, օրինակ կատարի հատակագծում՝ օգտագործելով գիտելիքներ մաթեմատիկայից, գծագրությունից և այլն:

ԳԼՈՒԽ 3
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գործնական աշխատանքի հիմնական նպատակներն են տալ գիտելիքներ և սովորողի մոտ զարգացնել հմտություններ ու կարողունակություն:

3.1 Սոցիալական հմտություններ

Սովորողի սոցիալական հմտությունների ձևավորումն ու զարգացումը նպատակ ունի կոնկրետ խնդիրների լուծման, օրինակ որևէ գործնական աշատանք կատարելուն և ոչ միայն դա: Սոցիալական հմտություններն ուղղված են

- կիրառելի գործնական ու տեսական գիտելիքներ մատուցել
- զարգացնելու անհատի ինքնադրսևորումը
- սովորողի կենսագործունեությունը ապահովող հմտության զարգացումը
- զարգացնել կրթության շարունակականությունը ապահովող հմտություններ
- սոցիալական հմտությունների միջոցով բերել մասնագիտական կողմնորոշման:

3.2 Նպատակային իրավիճակներ

Գործնական աշխատանքների միջոցով ստեղծվում են իրավիճակներ, որոնք սովորողներին մղում են ինքնուրույն դիտարկումներ կատարելու, ինչպես նաև համագործակցության: Սովորում են ինքնուրույն եզրահանգումներ անել, վերլուծելու կարողություն ունենալ, որոշումներ կայացնել, օգտվել առաջարկվող գրականությունից, համադրել, համեմատել, չափել և այլն: Գործնական աշխատանքների միջոցով ձևավորվում են գործնական հմտություններ և կարողություններ և գիտելիքների գործնական կիրառման կարողություն: Գործնական աշխատանքը բերում է փորձի և գործնական հմտությունների զարգացման, նաև կազմակերպչական և տնտեսական հմտությունների ձեռքբերում: Գործնական աշխատանքներ կատարելիս սովորողը ինքնուրույն է իրականացնում ձեռքբերված տեսական գիտելիքների և կառուցողական հմտությունների գործնականում կիրառումը:

ԳԼՈՒԽ 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գործնական աշխատանքները բնույթով և մեթոդներով տարբեր են, բայց ուղղված են մի նպատակի՝ զարգացնել սովորողի գիտելիքները, հմտությունները և կարողունակությունները:

4.1 Գործնական աշխատանքի գործնական մեթոդ

Գործնական աշխատանքի գործնական մեթոդը ենթադրում է գործնական աշխատանքների ինքնուրույն կատարում: Սովորողի ձեռքբերած գիտելիքները հիմնավոր են և օգտակար այնքանով, որքանով նա կարող է դրանք գործնականում կիրառել: Այդ գիտելիքների կիրառության կարողունակությունը զարգացնելու համար նախատեսվում են գործնական աշխատանքներ՝ ելնելով ուսումնական առարկաների առանձնահատկություններից, օրինակ՝

- լաբորատոր պայմաններում աշխատելու փորձ
- նոր տեխնոլոգիաների յուրացում
- ֆիզիկական պատրաստվածություն
- մոդելավորում և տեսական գիտելիքների կիրառում
- գործիքներով և սարքերով աշխատելու կարողություն
- տեղանքում կողմնորոշվելու ունակություն
- որոշակի ձևաչափով գրության կազմում
- մշակույթային և կենցաղային հմտություններ:

Գործնական աշխատանքները կարելի է կատարել թե՛ դասի ժամանակ, թե՛ դասից դուրս:

4.2 Գործնական աշխատանքի՝ ինքնուրույն աշխատելու մեթոդ

Սա սովորողի ինքնուրույն գործունեության տեսակ է, որը հնարավորություն է տալիս սովորողին զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողություն: Սովորողի պետք է կարողանա կատարել իրեն տրված աշխատանքը ինքնուրույն, կարողանա կոնկրետ նպատակներ դնել և գտնել դրանց լուծման ճանապարհը, ձևը, պլանավորի իր

անելիքները և ստանա վերջնական արդյունք, վերջինիս հիման վրա կատարի եզրահանգում: Այդպիսի գործնական աշխատանքի ժամանակ սովորողը պետք է կարողանա ինքնուրույն կատարել առաջադրանքները, որը կխթանի նրա ստեղծագործական մտածողությունը, հմտությունը, երևակայությունը և իմացական հետաքրքրությունը: Ինքնուրույն աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են գլխավորը երկրորդականից առանձնացնել, ինքնուրույն աշխատանքը նպաստում է սովորողի խոսքի զարգացմանը և բառապաշարի հարստացմանը:

Ինքնուրույն գործնական աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Ինքնուրույն աշխատանքները որպես գործնական աշխատանքի տեսակ նպաստում են զարգացնելու սովորողի տրամաբանությունը, ճանաչողությունը և ակտիվությունը: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները իրենք իրենց չեն առաջանում, դրանք անհրաժեշտ է ձևավորել և այդ գործում մեծ դեր ունի ուսուցիչը: Գործնական աշխատանքի համակարգված կասմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ սովորողները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները: Սովորողի մոտ դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, արարնք անհրաժեշտ են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար: Սովորողը ձեռք է բերում աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողություն, սովորում և իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերաստուգում: Ինքնուրույն գործնական աշխատանքի հաջողությունը կախված է մանկավարժից, նա պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխայի մոտ աշխատանքի կատարման ընթացքում: Մանկավարժը պետք է նախատեսի ինքնուրույն աշխատելու կարողությունները ստեղծվում են աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը: Առանձին աշակերտներին անհրաժեշտության դեպքում ցուցաբերի օգնություն:

Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարներ և մեթոդներ: Կառուցողական ինքնուրույն աշխատանքները նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ ստեղծում սովորողի մտավոր ակտիվության զարգացման համար: Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորման և նախաձեռնողականության դրսևորմանը:

4.3 Գործնական աշխատանքի խմբային մեթոդ

Խմբային գործնական աշխատանքը լավ արդյունք է տալիս, երբ կիրառվում է դպրոցից: Դպրոցականները սովորում էին սովորել խմնբային աշխատանքով, կատարում են աշխատանքի բաժանում, պայմանավորվածություն են ձեռք բերում, ստանում են ընդհանուր արդյունք: Խմբային գործնական աշխատանքը օգնում է շփման նոր ձևերի յուրացմանը և կոնֆլիկտների լուծմանը: Գործնական աշխատանքի խմբային մեթոդը նպաստում է գործնական աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելուն: Խմբային աշխատանքը արդյունավետ է դարձնում ուսումնական գործընթացը, նպաստում սովորողի համագործակցային կարողությունների զարգացմանը: Խմբային աշխատանքների շնորհիվ աշակերտների մոտ զարգանում են կարևոր մարդկային հատկանիշներ՝ լսել և հարգել մյուսների կարծիքը, համագործակցել, կրել պատասխանատվություն խմբի համար: Խմբային գործնական աշխատանքների ժամանակ նունիսկ ամենաթույլ կարողությունների տեր աշակերտը ձգտում է մասնակցել աշխատանքներին, նա թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում է ունենում տրված առաջադրանքների կատարմանը: Խմբային աշխատանքը օգնում է ձևավորելու միմյանց օգնելու ցանկություն և կարողություն:

Աշխատանքային խմբում ձևավորվում է միմյանց խրախուսելու, աջակցելու մթնոլորտ, սովորողների ջանքերը ուղղվում են ընդհանուր նպատակին հասնելուն: Խմբային աշխատանքը նպաստում է, որ ձևավորվի որոշակի վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, սեփական մտքերը կիսելու կարողություն, սեփական ներդրումն ունենալ խմբային աշխատանքում, կարողանալ ներկայացներ խմբի աշխատանքի արդյունքները և այլն: Խմբային գործնական աշխատանքի ժամանակ երեխան լավ է յուրացնում գիտելիքը, եթե այն ստացել է լսելով, տեսնելով, շոշոփելով, կարդալով, նկարելով: Գործնական աշխատանքը պիտի լինի (հատկապես տարրական դպրոցում) վառ ներկայացված, որպեսզի սովորողի ուշադրությունը ուղղվի անհրաժեշտ ուղղությամբ, նպատակին:

4.4 Լաբորատոր գործնական աշխատանք

Լաբորատոր գործնական աշխատանքը ուսուցման տեսակ է, որը սովորողը կատարում է ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Գործնական աշխատանքի այս տեսակը սովորաբար կիրառվում է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ առարկաներից: Լաբորատոր աշխատանքի հիմնական նպատակը նորից տեսական գիտելիքների ամրապնդումն է փորձի միջոցով: Օրինակ քիմիայից կարելի է կատարել փորձ՝ խառնելով տարբեր նյութեր, ապացուցելու կընթանան քիմիական ռեակցիա, թե ոչ: Սովորողը դա գիտեր տեսական դասից, և այն կամրապնդվի փորձի միջոցով: Իսկ օրինակ ֆիզիկայից լաբորատոր փորձի միջոցով հաստատել, որ կա ազդեցություն և հակազդեցություն, հավաքել շղթա և այլն: Կենսաբանությունից լաբորատոր աշխատանքի ընթացքում ուսումնասիրել բջջի կառուցվածքը և այլն:

Լաբորատոր աշխատանքների ընթացքում սովորողը ձեռք է բերում հմտություններ քիմիական նյութերի և ռեակտորների հետ աշխատելու, սովորում է զգույշ և կոկիկ աշխատել , ուշադիր լինել թե ինչ , ինչքան և ինչպես խառնել, արդյունքում ինչ հետևանքներ կլինեն: Սովորողը հասկանում է իր պատասխանատվությունը փորձի ժամանակ: Սրանք շատ

արժեքավոր հմտություններ են, որ ձեռք են բերվում լաբորատոր աշխատանքի ժամանակ, և բառերով բացատրելով դժվար է սովորեցնել:

4.5 Անալիզ, իրավիճակային և գործնական խաղեր

Այս բոլոր հնարների ժամանակ համագործակցում են մարդու ինտելեկտուալ հնարավորությունները՝ ձեռքբերված տարբեր առականերից, և ստիպում են տեսնել իրավիճակը տարբեր տեսանկյունից, հանդես գալ տարբեր դերերում, կատարել տրամաբանական ճիշտ եզրահանգումներ:

ԳԼՈՒԽ 5
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ

5.1 Գործնական աշխատանքի պլանի մշակում

Գործնական աշխատանքի պլանը մշակվում է որոշակի նպատակով: Գործնական աշխատանքի անցկացման սկզբում ուսուցիչն ունի մուտքի խոսք՝ հայտնում է թեման, նպատակը և գործնական աշխատանքը անցկացնելու կարգը: Կարելի է նաև էկրանին արագ անցկացնել թեմայի համար նախատեսված նկարներ, որ ակտիվացնի սովորողի հիշողությունները այդ պարապմունքի մասին:

Գործնական աշխատանք կարելի է իրականացնել տարբեր սխեմաներով, օրինակ սովորողը կատարում է առաջադրանքը ինքնուրույն, իսկ ուսուցիչը շրջում է շարքերով և հսկում աշխատանքը: Եթե մեծամասնությունը չի կարողանում կատարել առաջադրանքը, ապա կարելի է մի պահ դադարեցնել աշխատանքը, տալ անհրաժեշտ բացատրություն էլ ավելի հասկանալի դարձնելու համար: Սա մասնակի բացատրական մեթոդ է, որը օգտագործելով կնկատվի սովորողի գիտելիքների աճ և ի հայտ կգան նշաններ ինքնուրույն ստեղծագործելու:

Գործնական աշխատանքի նպատակն է սովորեցնել մտածել և ցանկացած խնդիր լուծել սխեմայով, էտապներով, որոնցից յուրաքանչյուրը նպատակաուղղված է: Ստեղծելով համակարգը (տվյալ թեմայից) անհրաժեշտ խնդիրներ առանձնացնելով կոնկրետ գիտելիքների համար հաշվարկելով պահանջվող ժամանակը՝ ուսուցիչը անցնում է պլանի մշակման: Գործնական աշխատանքը կատարելու համար առաջարկվող պլանի ձև՝

- որքան ժամանակ է պետք գտնելու հարցերի պատասխանները
- որքան ժամանակ կծախսվի տնային աշխատանքն ստուգելու համար
- ինչ օրինակներ և խնդիրներ կլուծվեն դասի ժամանակ և ինչ հետևողականությամբ
- ինչին ուշադրություն դարձնել այս կամ այն խնդիրը լուծելիս
- ինչպես տեղակայել գծագիրը և հաշվարկը տվյալ խնդրի
- ում հարցնել տեսական նյութը և ում կանչել գրատախտակի մոտ խնդրի լուծման համար
- ինչ հարցեր առաջադրել տեղից պատասխանելու համար
- ինչ հարցեր առաջադրել ուժեղ աշակերտներին
- ինչ հանձնարարություն տալ տնային ինքնուրույն աշխատանքի համար:

5.2 Առարկայական գործնական աշխատանքների առարկայական նպատակները

Գործնական աշխատանքները իրենց բովանդակությամբ և պահանջներով տարբեր են: Հետևաբար տարբեր են նաև նպատակներն ու պահանջները, ձևավորվող կարողություններն ու հմտությունները: Ստորև բերված են մի քանի ընդհանրական որակներ: Նպատակներ որոնց կարելի է հասնել գործնական աշխատանքով՝

- հետևել գործնական աշխատանքի ժամանակ ընթացող պրոցեսներին և միաժամանակ հետազոտել
- բացահայտել տրամաբանական և փոխադարձ կապեր
- երևույթը բնութագրող հատկանիշների բացահայտում

- հաշվարկների կատարում և դրանց ամրապնդում փորձի միջոցով
- փորձի արդյունքում ստացվող նոր նյուրի և արդյունքի ուսումնասիրություն
- փորձարկվող երևույթի կամ պրոցեսի գլխավոր հիմնադիր հատկանիշների բացահայտում
- փոխկապակցված կապերի բացահայտում, բնութագրում և վերհանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, գործնական աշխատանքը ձևավորում է գիտելիքների խորացում, ամրապնդում և կոնկրետացում և հմտություններ ապագա մասնագիտական գործունեության համար:

Զարգացնում է կարողություններ դիտարկելու, հետազոտելու, բացահայտելու, վերլուծելու ուսումնասիրվող երևույթի էությունն ու զարգացումը: Գործնական աշխատանքի կազմակերպումը պարզից բարդ աճին զուգընթաց կբերի ուսուցման ընթացքում դրական էմոցիաների՝ սեփական հաջողություններից ելնելով: Նպաստում է ստեղծագործելու, որոնումների, բացահայտելու: Սովորողին տրվում է հնարավորություն ինքն իրեն բացահայտելու իր հնարավորությունների և ունակությունների շրջանակում: Ուսուցիչը պետք է հանդես գա խորհրդատուի դերում և ոչ մի

կերպ չսահմանափակի սովորողի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործելու ունակությունը: Այսպիսով գործնական աշխատանքը լրացուցիչ միջոց է տեսական գիտելիքների յուրացման համար: Այն ձևավորում է հմտություններ գծագրեր, սխեմաներ, գրաֆիկներ կազմելու և եղած գիտելիքները ամրապնդելու և կատարելագործելու համար: Գործնական աշխատանքը ձևավորում է ինտելեկտուալ կարողություն և հմտություն պլանավորելու, անալիզի, շփման, գոյություն ունեցող մեխանիզմի յուրացման և նրա օգտագործման և ղեկավարման հմտության ձևավորում:

Ձևավորում է գիտելիքների կուտակում արտադրության կազմակերպման համար, ինչու չէ նաև աշխատանք կազմակերպելու և ղեկավարելու նախնական հմտություններ, գիտելիքը կյանքին կապելու և ապագայում ճիշտ մասնագիտություն ընտրելու, աշխատանքային պայմաններում ճիշտ ինքնադրսևորման համար: Գործնական աշխատանքը ընձեռում է մասնագիտական կողմնորոշման հնարավորություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.autogear.ru
2. www.tert.nla.am